Ամերիկացոց օրուայ վիպը.— Ամերիկացիք ամէն կիսամեկին ունենում են մի մի վէպ, որ ի փառս փառաց են բարձրացնում անցեալ ամառը այդ պատուին արժանացաւ Ջորջ Մորիէրի «Տրիլբի», իսկ այս ամառը տեղը բռնեց Կայպլայնի „Captains courageous“: Ինչպէս անցեալներում Մարկ Տվէնը, այս հեղինակն էլ մատներում կորցրեց իւր վաստակած կարողութիւնը. Բայց այդ կորուստը լիուլի պիտի վերադառնայ, որովհետև իւր հրաշալի վէպը ահագին քանակութեամբ է տարածվում Հիւսիսային Ամերիկայում. Վէպը ամենայն արժանիքներ ունի՝ նեարդեր ջլատող աշխատութիւնից յետոյ՝ ցանկալի հանգստութեան ընթերցանութիւն դառնալու համար. Մանկահասակ հերոսը շատ միլիոնատէրի երես առած և սատակ զաւակ է. Հայրը, մայրն ու որդին ճիշտ ամերիկեան տիպեր են. Հայրը՝ այն մարդկանցից մէկը, որ իւր ոյժերով համարում է և հարստութիւն է ձեռք բերել, բայց բնաւ ժամանակ չէ գտնում իւր որդուն դաստիարակելու համար. դիւրագրգիռ մայրը՝ որ իւր միահատիկ որդուն անգուսդն է գլորում, որովհետև նորա բոլոր ուզածները կատարում է, և ինքը պատանին՝ որ ճիշդ ճանապարհ է բռնել անտանելի ծոյլ վէս դառնալու համար,— սոքա ամէնքը սքանչելի նկարագրուած են միայն մի քանի գծերով. Ընթերցանութեան ամէնից զբօսալի մասն այն է, թէ ինչպէս այս մատաղահաս ամերիկացին մի «բաղդաւոր դժբաղդութիւնից» խրատվում է և գերազանց ճարտար մարդ է դառնում.

* * *

Բժշկութիւն ուսանելու մի նոր միջոց.— Ամերիկայի համալսարաններից մէկում եկող կիսամեկին բժշկութեան բաժնի աւարտող ուսանողները պէտք է խոհարարութեան արհեստի վարժութիւն ստանան. Դասախօսութեանց ցանկի մէջ այս ճիշդը կոչել են „Practical Pietetics“ (առողջութիւնը կազդուրելու գործնական արուեստ). Ուսանողները պարտաւոր են գործանոց-ի (լաբորատորիում) անդամ գրուել և հիւանդների ու առողջների համար՝ արգանակներ, խաշուներ, աթերաների տեսակներ (խիս, փափա), տապակածներ և այլն պատրաստելու հմտութիւն ձեռք բերել. Որչափ որ ծիծաղելի թուի այս գործը, այնուամենայնիւ պէտք է համոզիչների գործնական իմաստութիւնը արժանապէս գնահատել. Անշուշտ գործնական բժշկի համար խիստ կարևոր է, որ ճշգիւ և յաջողութեամբ հրահանգ տայ, թէ ինչպէս պէտք է պատրաստուին հիւանդի կերակուրները և ինչպէս փոփոխուի կերակուրների ցանկը.

ԿԻՊՐՈՍԻ ԱԶԳ. ՈՐԲԱՆՈՑԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԿՈՉՄԻՑ.

Կիպրոսի Ազգային Կրթարան Որբանոցին և անոր տեսուչ պ. Վահան Քիւրքճեանի նկատմամբ՝ Լօնտօնէն մի ամբաստանական թղթակցութիւն հրատարակուած էր Արծագանքի Յունուար 14/26 թուակիր թերթին մէջ:

Խնամակալութիւնս՝ այդ թղթակցութեան իւրաքանչիւր կէտը մանրակրկիտ քննութեան առնելով, և անոնց մասին վստահելի աղբիւրներէ տեղեկութիւններ ստանալով, նոյնպէս ազգային ձեռնհաս իշխանութենէ, և մինչև իսկ յօդուածին մէջ ի վկայութիւն յառաջ բերուած անձերէ, գրութիւններ ընդունած լինելով,

Համոզում գոյացուցած է

Թէ Կրթական — որբանոցին դրութեան և անոր տեսչին մասնաւոր և հանրային գործունէութեանց նկատմամբ Արծագանքի թղթակցին հաղորդուած տեղեկութիւնները՝ նախանձոտներու կողմէ յերիւրեալ անհիմն և անտեղի զրոյցներ են, և թէ պ. Վահան Քիւրքճեան արժանաւոր կը գտնուի իւր վրայ դրուած պատուաբեր վստահութեան:

Այս առթիւ Խնամակալութիւնս յատուկ ուշադրութիւն կը հրաւիրէ Կրթական — Որբանոցի կանոնագրոյն և առաջին տեղեկագրոյն վրայ, որոնցմէ բացայայտ կը տեսնուի որ սոյն հաստատութիւնն անձնական նկատումներէ, անկախ մարմնոց հսկողութեան ներքև կը գտնուի, և մի գոհացուցիչ ուղղութեան վրայ կը ընթանայ, հետևաբար լիովին արժանի է ազգին բարոյական և նիւթական աջակցութեանը:

Ի ԴԻՄԱՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Նախագահ.— Թ. Քէնի. Տ. Ոսահակեան
Առենապետ.— Ն. ա. Գ. Տր. Յարութիւնեանց
Գանձապահ. Սարգիս Եղիազարեան
Պատուակալ քարտուղար.— Յոհ. Անդրէասեան